Նշան Վանդակունի, Մարգար Վանեանց, Հայկ Վանատուր, Աւետիս Վանակն, Գարեգին Վանթրը, Սահակ Վանս, Պօղոս Վանթէ, Պետրոս Վանթուզ, Վրոյր Վանթիլաթէոր, Աբրահամ Վաներէց, Արշամ Վանումեանց, Սարգիս Վանողեան, Գուրգէն Վանթրըպլէս, Վահրամ Վանթրիւքիւլ, Նշան Վանթրիլոկ, Աւետիս Վանթրիւ, Վահան Վանթրուլեէ, Վարազդատ Վանտալ, Հայ Վանական:

Վանեցի գերդաստանի մը մէջ յաճախ մէկ հոգի դաշնակցական է, մէկ հոգի՝ ռամկավար, մէկ հոգի՝ հնչակեան, մէկ հոգի ալ՝ համայնավար: Դաշնակցականը կ'ըլլայ թթու, համայնավարը՝ կծու, հնչակեանը՝ կծկուած ու ռամկավարը՝ թթուած: Իսկ մէկ հոգի ալ անպատճառ չէզոք է՝ նոր կուսակցութիւն մը կազմուելու պարագային մէջը խոթելու համար իր ուժեղ քիթը:

Ամէն կուսակցութիւն տկարակազմ է առանց Վանեցիին: Այս պատճառով է, որ Խ. Հայաստանի մէջ կան բազմաթիւ համայնավար Վանեցիներ, արտասահմանի մէջ ալ՝ շատ Դաշնակցական Վանեցիներ: Ոմանք կ'ըսեն, թէ Վանեցին է, որ իր զօրութիւնը կ'առնէ կազմակերպութենէ: Մէկ բան բացարձակ է, որ Վանեցին ուժեղ ազգային մըն է, փոյթ չէ, թէ ուրկէ կը մատակարարէ իր ոյժը, աջէ՞ն, թէ ձախէն, վերէ՞ն, թէ վարէն, քաւարանէ՞ն, թէ դժոխքէն, ներսէ՞ն, թէ դուրսէն եւ կամ ամէն կողմէն:

Վանեցին ծնունդ տուած է երկու մեծ կազմակերպութիւններու. առաջին՝ արմէնօ-հրէական միութեան, երկրորդ՝ արմէնօ-հայկական եղբայրակցութեան:

Մինչ Սամսոնցիները կ'ուզեն հիմնել սամսոնականութիւնը, Կեսարացիները կ'ուզեն ստեղծել կեսարականութիւնը, Ակնցիները կ'ուզեն վերականգնել ակնընդականութիւնը եւ Տարօնցիները կը ճգնին առաջ բերել տարօնականութիւնը, Վանեցիները, ընդհակառակն, կ'ուզեն քանդել… վանականութիւնը:

Վանեցին որբ հայութեան տուած է Հայրիկ մը: Հայութիւնը, սակայն, որբ Վանեցիին մայրիկ մը չտալէ զատ, կնիկ մը տալն իսկ յաճախ շատ կը տեսնէ: